ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԱԾԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

Ժամանակակից հայերենում ածականը կազմության տեսակետից միատարր չէ. այն ներկայացնում է բազմազան ձևերի մի սիստեմ։ Դա պայմանավորված է հայերենի բերականական կառուցվածքի յուրահատկությամբ, իսկ այն առաջացել է, մի կողմից, գրաբարի և, մյուս կողմից, խոսակցական լեզվի բերականական կառուցվածքի էական կողմերի համադրումով։

Հայտնի է, որ ածականները կազմությամբ լինում են պարզ կամ արմատական և բաղադրյալ, այն է՝ ածանցավոր և բարդ։ Պարզ կամ արմատական ածականները յուրաքանչյուր լեզվում սակավաթիվ են, որը պայմանավորված է տվյալ լեզվի նախնական բառային կազմի աղքատությամբ։ Հայերենում պարզ ածականները բերականական ձևով նման են գոյականներին։ Գրաբարում ածականները հոլովվում էին գոյականների նման, չունենալով հոլովման առանձին սիստեմ։ Գրաբարի ածականը գոյականի հետ գործածվելիս մեծ մասամբ համաձայնվում էր նրա հետ։ Հետագայում հայերենը կորցրեց ածականների այդ առանձնահատկությունը, և ածականներն իրենց ձևով ոչնչով չեն տարբերվում գոյականներից։ Սակայն ածականների մի մասը բերականական տեսակետից ունի մի յուրահատկություն, որով տարբերվում է խոսքի մյուս մասերից. դա համեմատության աստիճաններ ունենալն է։

Պարզ ածականների պակասը լրացնում են բաղադրյալ ածականները, որոնք կազմվում են խոսքի տարբեր մասերից՝ ածանցման և բառաբարդացման ճանապարհով։

Բաղադրյալ ածականները ժամանակակից հայերենում մի քանի տասնյակ անգամ ավելի շատ են, քան պարզ կամ արմատական ածականները, և դա հասկանալի է։ Որքան մարդը շատ հատկանիշներ է ճանաչում, այնքան շատ ածականներ են ստեղծվում (եթե չհաշվենք բառիմաստի փոփոխությունների հետևանքով այլ խոսքի մասերի, գլխավորապես՝ գոյականների փոխանցումները ածականի, բայց նման դեպքերն էլ սակավաթիվ են)։

Ածականները բաժանվում են երկու մեծ խմբի՝ որակական, որոնք ցույց են տալիս առարկաների որակը, հատկանիշը՝ իրրև նրա ատրիբուտը, որն անբաժանելի է նրանից, և հարաբերական՝ երկու ենթատեսակով՝ բուն հարաբերական, որը ցույց է տալիս առարկայի նյութեղեն հիմքը, ինչից լինելը, և հատկացական, որը նշում է առարկայի վերաբերումը, հատկացումը այլ առարկայի կամ երևույթի։ Ածականների այս երկու խմբերի միջև կա արմատական տարբերություն։ Այդ այն է, որ որակական ածականները, իրրև առարկաների տարբեր որակներ արտահայտող բառեր, կարող են ունենալ հատկանիշի տարբեր աստիճանները ցույց տվող ձևեր, մինչդեռ հարաբերական և հատկացական ածականները, իրրև առարկայի նյութեղեն հիմքը կամ վերաբերումը արտահայտող բառեր, չեն կարող ունենալ տվյալ հատկանիշի տարբեր աստիճանները ցույց տվող ձևեր, բանի որ այդպիսիը չկան. որևէ առարկայի, ասենք, նյութեղեն հիմքը տարբեր աստիճանի չի լինի։ Եթե ասում ենք՝ «Սա փայտե տուն է», ապա ի նկատի ունենք տան նյութը, որը փայտն է, իսկ փայտե ածականը չի կարող ունենալ համեմատության աստիճաններ։

Որակական ածականները կազմությամբ լինում են ինչպես պարզ (բոլոր պարզ ածականները որակական են), այնպես էլ ածանցավոր և բարդ, իսկ հարաբերական ածականները պարզ չեն լինում, այլ ածանցավոր, երբեմն նաև բարդ։

Արդի հայերենում գործուն են մի շարք ածականակերտ ածանցներ, որոնց մի մասը այդպիսին է եղել նաև գրաբարում։ Ածականակերտ ածանցները լինում են նախածանցներ և վերջածանցներ։ Հայերենի բուն նախածանցները՝ ան, ապ, տ, դժ, չ, հիմնականում ածականներ են կազմում գոյականներից, բայարմատներից, ինչպես նաև այլ խոսքի մասերից։ Այդ ածանցները գրվում են ինչպես պարզ կամ արմատական բառերի, այնպես էլ ածանցավոր բառերի վրա՝ ժխտելով որևէ հատկանիշի գոյությունը տվյալ առարկայի կամ երևույթի մեջ։ Այս իմաստով էլ

ժխտական նախածանցով կազմված ածականները ըստ էության ոչ թե հատկանիշ են ցույց տալիս, այլ հատկանիշի բացակայությունը, որը գիտակցվում է իբրև հատկանիշ (չունենալն էլ հատկանիշ է)։ Սրանցից առավել գործուն է ան-ը, որով կազմվել և կազմվում են հարյուրավոր ածականներ։ Օրինակ՝ անտեր, անտուն, անհաց, անարյուն, անմայր, անջուր, անողորմ, անհույս, անհյուրասեր, անզգա և այլն։ Համեմատաբար սակավաթիվ ածականներ են կազմվում ժխտական մյուս նախածանցներով։

Ածականներ են կազմվում նաև հունաբան դպրոցի ստեղծած մի շարք նախդիրներով (դրանց մի մասը հետագայում գոյական է դարձել)։ Ածական են կազմում արտ—, բաղ—, բաց—, գեր—, ընդ—, հակ—, համ—, ներ—, վեր—, հար—, մակ—, ստոր—, տար—, նախդիրները (արտակարգ, արտառոց, արտասովոր, արտաժամյա, արտադպրոցական, բաղաձայն, բացակա, բացասական, գերադաս, գերածավալ, գերամեծար, գերբնական, գերմարդկային, ընդոս, հականիշ, հակադարձ, հակամարտ, հակազգային, հակամարդկային, համատարած, համապարփակ, համամիութենական, հարակից, մակաբույծ, ներդաշնակ, ներկուսակցական, ստորերկրյա, ստորջրյա, վերստուգիչ, տարօրինակ, տարամերժ և այլն)։

Վերջածանցներն ավելի շատ են և միաժամանակ ավելի գործուն։ Ածականակերտ վերջածանցները լինում են երկու տեսակ՝ որակական ածականներ կազմող և հարաբերական ածականներ կազմող։

Հարաբերական ածականներ կազմող ածանցները շատ սահմանափակ են. դրանց թիվը 7—8-ից չի անցնում, որոնցից բուն հարաբերական են կազմում — յա, —ե, —եղեն. հատկացական՝ —ական, —ային, —ենի, —երեն, —արեն, —յան, —յա ածանցները։ Այդ ածանցներով են կազմված արծաթե, ոսկե, մորթե, փայտե, պողպատե, ծովափնյա, երկամյա, սևաչյա, լուսեղեն, ջրեղեն, հրեղեն, հայրական, հայկական, մարմնական, ծովային, մթերային, լեռնային, դաշտային, հայրենի, վայրենի, հայերեն, ռուսերեն, լենինյան, մարքսյան, աջակողմյան, հունվարյան և այլն։ Սակայն այս ածանցներով կազմված բազմաթիվ ածականներ վերածվել են գոյականի և այժմ չեն գիտակցվում իբրև ածական։ Այդպես են՝ ազգական, առևտրական (կա և՛ իբրև ածական, և՛ իբրև գոյական), օտարական, գիտնական, հանդիսական, զորական, պաշտոնյա, միջօրե, շինական, վկայական, խնձորենի, սամուրենի։ Ածականի փոխանցումը գոյականի պայմանավորված է նրա շարահյուսական կիրառության առանձնահատկությամբ։ Ածականն իբրև որոշիչ գործածվելով կարող է արտահայտել նաև իր որոշյալի իմաստը։ Այդ պատճառով էլ հաճախ որոշիչը միայնակ հանդես է գալիս որոշյալի փոխարեն և ընկալվում իբրև գոյական։ Իսկ դա հանգեցնում է այն բանին, որ ածականը վերածվում է գոյականի։ Հետագայում էլ, գոյական դարձած ածականների նմանությամբ, ստեղծվում են նոր գոյականներ՝ համապատասխան ածականակերտ ածանցներով։

Այս ձևով են կազմվել ամանեղեն, նպարեղեն, ակնեղեն և այլ գոյականներ։

Ավելի շատ են որակական ածականներ կազմող վերջածանցները։ Դրանք դրվում են գոյականների, բայարմատների կամ բայահիմքերի, ածականների և այլ խոսքի մասերի վրա ցույց տալով զանազան հատկանիշներ, իսկ երբեմն էլ՝ հատկանիշի տարբեր աստիճաններ։ Որակական ածական կազմող մոտ 30 վերջածանցներից գործուն են՝ —ատ, —գին, —գույն, —եղ, —իկ, —կոտ, —ովի, —ոտ, —որդ, —ուն, —վետ, (—ավետ), —վոր, (—ավոր) և այլն։ Որոշ մասն էլ արտադրողական են եղել գրաբարում, և արդի գրական լեզվում կան դրանցով կազմված բազմաթիվ ձևեր՝ ձուլածո, կոփածո, չափածո, բրածո, հանածո, շինծու, հատու, քսու, աչառու, ահարկու, արյունարբու, վայելուչ, սրտառուչ և այլն։

Այս ածանցներով կազմված ածականների զգալի մասը նույնպես այժմ գոյական է դարձել։ Նման գոյականներից շատերի մեջ ածանցն այնպես է ձուլվել արմատին, որ արտաքուստ դժվար է այն ճանաչել։ Այսպես են իշխան, պատվիրան, բացատ, հեղուկ, զեռուն, մածուն և այլն։ Մի շարք բառեր էլ հետագայում սրանց նմանությամբ կազմվել են միանգամից իբրև գոյական։ Այսպես են՝ հեծելակ, վիպասան, սավառնորդ, հանելուկ, հորձանուտ և այլն։

— Գույն ածանցը կազմում է գերադրական աստիճան այնպես, ինչպես ամեն բառը՝ բաղադրություն կազմելով։ Ամեն բառը գտնվում է ինքնուրույն բառից ածանցի վերածվելու պրոցեսում։

Ածականակերտ ածանցները դրվում են գոյականի, բայի, ածականի, դերանվան և այլ խոսքի մասերի վրա։ Այսպես, գոյականներից են կազմված հայրական, մարմնական, ծովային, լեռնային, մարքսյան, փետրվարյան, արծաթե, հրեղեն, ծովափնյա, լեզվանի, գունատ, պոչատ, անվանի, կեղտոտ, մրոտ, հողոտ, քարոտ, ցավոտ, մրգավետ, պտղավետ, հացավետ, փառավոր, կանոնավոր և այլն։ Բայարմատից կամ բայահիմքից են կազմված՝ ձուլածո, կոփածո, տաշածո,

բրածո, շինծու, փազան, կծան, շրջիկ, անառիկ, ուռուցիկ, մածուցիկ, ընթացիկ, ամաչկոտ, բարկացկոտ, զայրացկոտ, տվովի, ընտրովի, հնարովի, ծալովի, հատու, աչառու, ահարկու, բանուկ, կտրուկ, դիպուկ, փաղանցուկ, խոսուն, գիտուն, շարժուն, զգայուն, կայուն, տոկուն, դիմացկուն, կանգուն, ունևոր, անցավոր *և այլն։*

Մի շարք ածանցներ, դրվելով ածականների վրա, ցույց են տալիս հատկանիշի զանազան աստիճաններ։ Դրանք հնում եղել են ածականների համեմատության աստիճանների դրսևորման միջոց, սակայն հետագայում նվազել է դրանց սաստկացնող նշանակությունը, և այժմ այդ ածանցներով կազմված ածականների մեջ այն չի գիտակցվում։ Այդ է պատճառը, որ նման ածանցներով կազմված ածականները արդի գրական լեզվում շատ հաճախ հանդես են գալիս համեմատության աստիճանների կազմության նոր ձևերով։ Ածականների վրա դրվում են —ակ, —անի, —աշ, —գին, —իկ, —ին, —ուկ, —ուշ, —վոր, (—ավոր), —վուն, (—ավուն), — գույն *ածանցները։ Այսպես, օրինակ՝ կան* կլոր *և* կլորիկ, կապույտ *և* կապուտակ, հաջող *և* հաջողակ, գեղեցիկ *և* գեղանի, թթու *և* թթվաշ, մատաղ *և* մատղաշ, մոլի *և* մոլեգին, փոքր *և* փոքրիկ, մանր *և* մանրիկ, քաղցր *և* քաղցրիկ, անհնար *և* անհնարին, խոր *և* խորին, դժվար *և* դժվարին, տաք *և* տաքուկ, գեր *և* գիրուկ, սև *և* սևուկ, վայել *և* վայելուչ, անտեր *և* անտերունչ, հաստ *և* հաստավուն, բարակ *և* բարակավուն, կարճ *և* կարճավուն, կարմիր *և* կարմրավուն *և այլն։ Այժմ էլ այս ածանցներով կազմված և համապատասխան պարզ ածականների միջև զգացվում է համեմատության աստիճանի երանգային տարբերություն. այնուամենայնիվ դրանք հիմնականում գիտակցվում են իբրև դրական աստիճան, և այդ ձևերից կազմվում են համեմատության աստիճաններ* (փոքրիկ — ավելի փոքրիկ — շատ փոքրիկ — չափազանց փոքրիկ — ամենափոքրիկ, տաքուկ — բավական տաքուկ — ավելի տաքուկ — շատ տաքուկ *և այլն)։*

Արդի հայերենում ածական են դարձել գրաբարի ապառնի դերբայի —ի-*ով վերջավորվող անցյալ դերբայի, ինչպես նաև ներկա դերբայի* —իչ-*ով վերջավորվող բազմաթիվ քարացած ձևեր։ Այսպես, ածական են՝* ցանկալի, բաղձալի, հուսալի, զարմանալի, սիրելի, բուժելի, անցյալ, կարծեցյալ, տառապյալ, սառուցյալ, հետևյալ, կատարյալ, թովիչ, կիզիչ, մխիթարիչ *և այլն (իհարկե նման բազմաթիվ ձևեր գոյական են դարձել, ինչպես՝* գրիչ, գործիչ, քննիչ, նկարիչ, ուսուցիչ, հայելի, ածելի, ունելի, բանալի, հնձյալ, ննջեցյալ *և այլն)։*

Հետագայում դերբայական այս ձևերի նմանությամբ կազմվել են նոր ածականներ —իչ, —ի, —յալ *մասնիկներով, որոնք արդեն սկսել են գիտակցվել իբրև ածականակերտ ածանցներ։ Այդպես են՝* կազմակերպիչ *(որ նույնիսկ գոյական է դարձել),* զավթիչ, մարզիչ, կազդուրիչ, անջատիչ, սահմռկեցուցիչ, խոտելի, ստորադրյալ *և այլ ածականներ։*

Այս կազմությունն ունեցող մի շարք ձևեր գիտակցվում են որպես գոյական, ինչպես՝ վարիչ, կառավարիչ, թողարկիչ, հրատարակիչ *և այլն։*

Ածականների կազմության բավական շատ տարածված եղանակ է բառաբարդումը։ Գրական լեզվում ածականներ կազմվում են տարբեր խոսքի մասերի բարդությամբ. ածական-գոյական, ածական-բայ, գոյական-բայ, դերանուն-բայ և այլն։

Գոյականների կրկնությամբ (հարադիր, կցական և իսկական բարդություններով) կարող են կազմվել ածականներ, ինչպես՝ փունջ-փունջ, տեսակ-տեսակ, պուտ-պուտ, գունդ-գունդ, գույնզգույն, պեսպես, զանազան *և այլն։*

Ածականների կրկնությամբ արտահայտվում է հատկանիշի աստիճանավորում։ Այսպես, կրկնությամբ են կազմվել՝ ծանր-ծանր *(շատ ծանր),* բարձր-բարձր, դառը-դառը *(շատ դառը),* երկար-երկար, տաք-տաք, լիք-լիք։ *Բավական շատ են այն կրկնավոր ածականները, որոնցում առաջին, երբեմն էլ երկրորդ բաղադրիչը հնչյունափոխության է ենթարկվում, օրինակ՝* մանր-մունր, հաստարեստ, ոլոր-մոլոր, սևիկ-մևիկ, սուտ-մուտ, լեփ-լեցուն, կաս-կարմիր, վառվռուն, խառնիխուռն։ *Երբեմն էլ բաղադրիչները չեն փոփոխվում՝* շարաշար, ջերմաջերմ, մեծամեծ *և այլն։*

Ածականներ ամենից շատ կազմվում են իսկական բարդությամբ։

Իբրև կանոն, ածական են լինում այն բոլոր բարդությունները, որոնց առաջին բաղադրիչն ածական է։ Այսպես, ածականից և գոյականից են կազմված՝ սևահեր, զանգրահեր, մեծամիտ, գեղեցկադեմ, նեղսիրտ, լայնալին, կանաչազգեստ, հաստագլուխ, ծանրամարմին, երկարավիզ *և այլն։ Ածականից և բայից են կազմված՝* սրընթաց, կարճատես, ծանրաշարժ, շքեղազարդ, բարձրագնաց, ճշմարտախոս, արդարադատ *և այլն։*

Գոյականից և բայից են կազմված՝ հայրենասեր, ազգատյաց, ցավատանջ, արյունախում, երկնասլաց, սրախողխող, նյութակոտոր, անդամալույծ, հուսահատ, բևաքափ, ջրատար, ալեզարդ, ձյունապատ *և այլն։*

Կան մի շարք բարդություններ, որոնք ածականից վերածվել են գոյականի (ձկնորս, մատենագիր, բարեգործ, ձեռագիր, հոդածին, ջրաղաց և այլն)։

Ածականներ են կազմվում նաև դերանուն-բայ բարդությամբ։ Օրինակ՝ ինքնանավան, ինքնասեր, այլասեր, այլադավան, ինքնակոչ, ինքնարույս։

Գոյականի և ածականի բարդությունը գարձյալ ածական է կազմում, ինչպես՝ լուսապայծառ, սրտաբաց, դոնրաց, գոնփակ, մարդաշատ, մտամոլոր, ձյունախառն, մարդավայել, ճարգարժան, պատվարժան, կնամոլ, մարդանման, նպատակահարմար և այլն։

* * *

Արդի հայերենում բավական բարդ պատկեր ունի որակական ածականի համեմատության աստիճանների կազմությունը։ Հայտնի է, որ որակական ածականներն ունեն համեմատության երեք աստիճան՝ դրական, համեմատական և գերադրական։ Այս երեք աստիճաններով, սակայն, չեն սահմանափակվում առարկաների և երևույթների՝ մարդու համար անընդհատ հայտնի դարձող հատկանիշների տարբեր աստիճաններն ու երանգավորումները։ Բացի դրական աստիճանից, որ նշում է առարկայի որակը առանց համեմատելու այլ առարկաների հետ, համեմատական և գերադրական աստիճաններն ունեն դրսևորման բազմազան ձևեր։

Համեմատական աստիճանը, ինչպես հայտնի է, բերականական կատեգորիա է, որ երբեմն դրսևորվում է ձևաբանական, երբեմն էլ շարահյուսական միջոցներով։ Հայերենը հին շրջանից սկսած ադքատ է քերականական այդ կատեգորիայի դրսևորման ձևաբանական միջոցներից. համեմատության աստիճանները մեծ մասամբ արտահայտվում են շարահյուսական եղանակով։

Ժամանակակից հայերենում իբրև ածականի համեմատության աստիճանների արտահայտման ձևաբանական միջոց հանդես են գալիս —ագույն ածանցը և ամեն— բառը։ Այդպիսի դեր են կատարում նաև —վուն, —աշ ածանցները, սակայն դրանց կիրառությունը սահմանափակված է բիչ թվով ածականներով։ Եվ քանի որ հայերենը չունի ածականի համեմատության աստիճաններն արտահայտող ձևաբանական այլ միջոցներ, ուստի հատկանիշի բազմազան երանգավորումներն ու աստիճաններն արտահայտվում են մի շարք բառերի հարադրությամբ, որոնք ավյալ դեպքում փաստորեն վերածվում են ձևաբանական իմաստ դրսևորող խոսքի մասերի։ Այդպիսի ֆունկցիա են կատարում բազմաթիվ մակբայներ և ածականներ։

Ստորև այդ մենք ցույց կտանք համեմատության յուրաքանչյուր աստիճանի կազմության մասին խոսելիս։

Որակական ածականի համեմատական աստիճանը լինում է նվազական, հավասարական և առավելական, իսկ գերադրական աստիճանը լինում է բացարձակ գերադրական, որը ցույց է տալիս ավյալ հատկանիշի գերադրական աստիճանը՝ առանց համեմատելու այլ առարկաների հետ, և հարաբերական գերադրական, որը նշում է ավյալ հատկանիշի գերագույն աստիճանը՝ այլ առարկաների նկատմամբ։

Համեմատության այս աստիճանների միջև էլ կան բազմազան աստիճանավորումներ։ Այսպես, առավելական համեմատական աստիճանը կարող է լինել ավելի բարձր, մի ինչ ավելի բարձր, բավական բարձր, էլ ավելի բարձր, շատից ավելի բարձր (որը մոտենում է գերադրականին)։

Նվազական համեմատական աստիճանն արտահայտվում է երկու միջոցով։ Առաջինը ինչ, ցակավ, պակաս, նվազ, մի փոքր, փոքր-ինչ և նման բառերի հարադրությամբ կազմվող ձևն է։ Օրինակ՝ «Պետրոս Մինարյանը (այս էր ուղղագիս անունը) հայոց հոգևոր դպրոցի սան էր, տակավին երիտասարդ, միջահասակ, փոքր-ինչ թուլակազմ, բայց աշխույժ և գրավչագեմ» (Մուրացան, Երկեր, IV, 1954, 66)։

«Սա հաղթանդամ, բարձրահասակ, բայց մի փոքր կորամամակ ծերունի էր, մոտավորապես յոթանասուն տարեկան» (Մուրացան, IV, 95)։

Նվազական համեմատականի դրսևորման մյուս միջոցը ածանցմամբ կազմությունն է։ Այսպես, —վուն, —ավուն, —աշ ածանցներով կազմվում են՝ մեծավուն (մեծին մոտ, ոչ լրիվ մեծ), կարճավուն, կարմրավուն, կանաչավուն, բբվաշ և այլ ձևեր, որոնք ավյալ ածականների նվազական համեմատական աստիճանն են դրսևորում։

Հավասարության համեմատական աստիճանը կազմվում է մի շարք ձևերով։ Սովորականն է պես, նման, չափ և այլ կապական բառերի ու կապի խնդիրների հարադրմամբ կազմությունը ածականի դրական աստիճանի հետ։ Սա ըստ էության նկարագրական համեմատական է։ Այս-

պես, լինում են՝ ճարի պես լուռ, ձկան պես լուռ, ցինիկի պես անկեղծ, մահվան չափ սարսափելի, գազանի նման կատաղի և այլն։

«Բայց նա ոչինչ չէր զգում, զգում էր միայն մի բան—սիրունու չափ տենչալի և մահվան չափ անդիմադրելի, զգում էր ծարավ, ոգելից խմիչքի անհուն ծարավ» (Նար-Դոս, Երկերի ժողովածու, I, 1955, 45)։

«Բայց Մային ձկան պես լուռ, իր բանին էր» (Նար-Դոս, I, 55)։

«...Նա ցինիկի պես անկեղծ էր, լրբի պես համարձակ և երեխայի պես անփույթ» (Նար-Դոս, II, 465)։

«Մի զույգ եգիպտական աղավնիներ, սպիտակ որպես ձյուն, բույն էին դրել ուղիղ անձավի մուտքի վերևում, ապառաժի խորին ճեղքվածքի մեջ» (Րաֆֆի, Երկ. ժող., VII, 1956, 224)։

«Այդ պահին, ահա, մոմի պես բարակ ու երկարահասակ մի երիտասարդ վախեցած դուրս եկավ չորրորդ լսարանից» (Գ. Աբովյան. Թեհրան, I, 7)։

«Ես սիրում եմ քո մեղավոր աչքերը խոր,
Գիշերի պես խորհրդավոր» (Վ. Տերյան, Երկ. ժող., I, 1950, 12)։

Համասարական համեմատականի այս բաղադրյալ կազմությունը երբեմն վերածվում է բարդ բառի, որտեղ առաջին բաղադրիչ գոյականը ցույց է տալիս համեմատության եզրը, իսկ երկրորդ բաղադրիչը՝ հատկանիշը։ Այսպես են կազմված՝ ձյունասպիտակ (ձյունի չափ, նման սպիտակ), հրաշեկ, հրակարմիր, բոցավառ, լուսապայծառ, երկնագույն և այլն։

Երբեմն էլ համասարական համեմատական աստիճան կազմող բառը լինում է ցուցական դերանուն՝ իբրև ձևական անդամ, որի բովանդակությունն արտահայտվում է երկրորդական նախադասությամբ։ Օրինակ

«Այդ բոպեին այնքան զվարճալի արտահայտություն էր ստացել նրա դեմքը, որ ծիծաղս չկարողացա զսպել» (Նար-Դոս, II, 419)։

«Նա բաժանվեց ինձնից այնքան ուրախ և հանգստացած, որ կարծես այլես ոչ մի դժբախտություն գոյություն չունի նրա համար աշխարհիս երեսին» (Նար-Դոս, II, 499)։

Առավելական համեմատական աստիճանը, բացի այն ձևերից, երբ ածականի դրական աստիճանը համեմատվող առարկայի բացառականի կամ քան նախադրությամբ հայցականի մոտ է դրվում (Վարդանը Պետրոսից մեծ է. Գրիգորը խելոք է, քան Դանիելը), դրսևորվում է սովորաբար ավելի բառի հարադրմամբ՝ դրական աստիճանին (ավելի բարձր, ավելի գեղեցիկ և այլն)։ Սակայն սա միակ ձևը չէ։ Հատկանիշի առավելությունն ունի մի շարք երանգավորումներ, որոնց արտահայտման համար գործածվում են մի քիչ ավելի, բավական, բավականին, էլ ավելի, առավել, շատ ավելի և այլ բառեր՝ հարադրվելով դրական աստիճանին։ Այսպես, լինում են՝ բավական երկար, համեմատաբար բանկ, փոքր ի շատե խելացի, առավել գրավիչ և այլն։ Օրինակ՝

«Իսկ այդ համեմատաբար բանկ ուտելիքները գնելու համար փող միշտ ուներ, որովհետև իր արհեստի մեջ լավ վարպետ էր...» (Նար-Դոս, I, 58—59)։

«Այդ տուն կոչվածը մի բավական մեծ խրճիթ էր, որ երբեմն տիրոջ կթան կովերի համար գոմի տեղ էր ծառայում» (Նար-Դոս, I, 86)։

Կան նաև համեմատականի ձևեր, որոնք ցույց են տալիս հատկանիշի այնպիսի աստիճան, որը դուրս է համեմատությունից, սակայն և յուրահատուկ համեմատական է։ Այսպես են՝ անսովոր լուրջ, արտասովոր ուրախ, արտակարգ գեղեցիկ, անսպասելի զվարթ և այլն։

«Նստեց պատուհանի առջև, մի ծխախոտ հանեց, վառեց և սկսեց ծխել անսովոր լուրջ և ինքն իր մեջ ամփոփված, ինչպես նախորդ գիշերը անքառման ժամին» (Նար-Դոս, II, 527)։

«Ասա, ասա, ես քեզ լսում եմ,— ասացի ես չափազանց հետաքրքրված նրա արտասովոր լուրջ տոնից և աչքերի արտահայտությունից տեսնելով, որ վերջապես պիտի պարզվի այն գաղտնիքը, ինչ որ տակավին մութ էր մնում ինձ համար այդ տարօրինակ երիտասարդի մեջ» (Նար-Դոս, II, 534)։

Համեմատության երրորդ աստիճանը գերադրականն է, որն իմաստով երկու տեսակ է։ Առաջինը հարաբերական գերադրականն է, որը կազմվում է դրական ածականի դրական աստիճանի ձևը ամեն բառով բարդելով կամ —գույն ածանցի ավելացմամբ։ Օրինակ՝ ամենաբարձր, բարձրագույն, վեհագույն, ամենասքանչելի և այլն։ Հարաբերական գերադրականի համար սովորական է նաև ամենից, բոլորից և առհասարակ համեմատվող առարկաների բացառական հոլովաձևերի հարադրմամբ կազմությունը, ինչպես՝ ամենից խելոք, ամենից բարձր, ամենից երկար, բոլորից ափով, բոլորից ազնիվ և այլն։ Օրինակ՝

«Այդ կինը Մեղան էր, թագուհու գորովագութ դայակը, դղյակում եղած կանանց մեջ ամենից բարին և ազնվասիրտը» (Մուրացան, III, 8)։

«Ինչո՞ւ սպիտակ կոչվի այդ տունը,

Ամենից դեղին տունը աշխարհում» (Ս. Վահունի, Երգերի գիրք, 1949, 58)։

Բացարձակ գերադրականը, որը ցույց է տալիս որևէ հատկանիշի բարձրագույն աստիճանը՝ առանց նշելու, ի նկատի ունենալու համեմատվող առարկաները, կազմվում է մի շարք մակբայների, ածականների և այլ խոսքի մասերի հարադրմամբ՝ ածականի գրական աստիճանին։ Որոշ գերադրական կազմող հանդես են գալիս շատ, խիստ, չափազանց, անսահման, վերին աստիճանի, չափից դուրս, բոլորովին, ամբողջովին, սարսափելի, անասելի և այլ բառեր։ Օրինակ՝ անսահման բարի, անչափ գեղեցիկ, անչափ հրապուրիչ, խիստ դուրեկան, չափազանց հետաքրքիր, շատ ուրախ, չափից դուրս երկար, սարսափելի տգեղ և այլն։

«Ասենք այդպիսի վերաբերմունքի բուն պատճառը պետք էր որոնել իրեն իսկ Գարեգինի մեջ, որի անսասման բարի սիրտը, կայտառ հոգին, ոգևորված շատախոսությունը և պարզամիտ փիլիսոփայական հայացքները միշտ այդպիսի վերաբերմունք էին թելադրում փոքր ի շատե խելահաս խոսակցին» (Նար-Դոս, II, 458)։

«Տորքը չէր նման հասարակ մարդու,

Այլ մի աժդահա և շատ ահարկու» (Ղ. Աղայան, Ընտիր երկեր, 1956, 371)։

«Այդպիսի կսկիծով քնից արթնանում են այն մարդիկ, որոնք նախորդ օրը կորցրել են անչափ թանկագին մի բան, կամ գործել են ծանր մի հանցանք» (Ն. Զարյան, Հացավան, 1949, 3)։

«Բայց որքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ մեծ իշխանը երկու օրից հետո վերադարձավ նույնպես Գարդման, վերին աստիճանի տխուր և հուսահատ» (Մուրացան, III, 88)։

«Ցածրահասակ, լդար, ծայր աստիճանի արագաշարժ՝ տեղն ու տեղը կրակ էր Գիւ-Հոռոմսիմը» (Նար-Դոս, I, 66)։

Գերադրական աստիճանը կարող է արտահայտվել նաև ածականի կրկնությամբ, ընդորում կրկնավոր ածականը լինում է և՛ անիսկական, և՛ իսկական բարդություն։ Այսպես՝ գերադրական են՝ մեծ-մեծ (շատ մեծ), սուր-սուր (շատ սուր), սև-սև, բարդ-բարդ, կաս-կարմիր, լեփ-լեցուն, բարձրաբերձ, խորախոր և այլն։ Օրինակներ՝

«Ոչ ոքից չէր վախենում, բացի ոստիկանությունից, որ շատ անգամ կոխել էր նրան մեծ-մեծ մկներով լի նկուղը և մի քանի անգամ էլ նույնիսկ պրիստավը իր սեփական ձեռքով արյունլվիկ էր արել նրա քիթն ու պռունկը» (Նար-Դոս, I, 58)։

«Բարձր են երկնի ձեղունները, նազելիս,
Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից,
Խոր են երկրի հիմունքները, նազելիս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից» (Ավ. Իսահակյան, Երկեր, 1955, 136)։

Բացարձակ գերադրականի կազմության տարբեր ձևերը պայմանավորված են ածականի իմաստի աստիճանով։ Օրինակ՝ շատ բառի հարադրմամբ կազմվող գերադրականը որակի ավելի պակաս գերազանցություն է նշում, քան չափազանց բառի հարադրմամբ կազմվածը։

Հայտնի է, որ հարաբերական ածականները, ի տարբերություն որակական ածականների, որպես առարկայի ինչից լինելը կամ որևէ մեկին, մի բանի վերաբերվելը ցույց տվող բառեր, չունեն համեմատության աստիճաններ։

Այդ ճիշտ է բուն հարաբերական ածականների վերաբերյալ (արծաթե, երկաթյա, հրեղեն և այլն)։ Սակայն հատկացական ածականների որոշ մասը, առանձնապես —ական և —ային ածանցներով կազմվածները, ունենում են համեմատության աստիճան՝ դրանով իսկ վերածվելով որակականի։ Այսպես, համեմատության աստիճան ունեն՝ բնական, սովորական, մարդկային, ընկերական, բարեկամական, լական և այլ հատկացական ածականները (դրանցից կազմվում են՝ ավելի բնական —միշ բնական —շատ բնական, ավելի սովորական —շատ սովորական —ամենասովորական, ավելի մարդկային —շատ մարդկային, ավելի բարեկամական —շատ, —խիստ բարեկամական, ավելի լական — ամենալական և այլ ձևեր)։

Պետք է նշել, սակայն, որ մի շարք որակական ածականներ չեն ունենում համեմատության աստիճան։

Ինչո՞վ բացատրել դա։

Ամենից առաջ՝ համեմատության աստիճան չունենալը պայմանավորված է տվյալ ածականի բառային իմաստով։ Կան ածականներ, որոնց ցույց տված հատկանիշը աստիճանական երանգավորման բնույթ չունի, հետևաբար և նրանցից համեմատության աստիճաններ չեն կարող

կազմվել։ Այդ ածականները կարող են լինել ինչպես պարզ, այնպես էլ ածանցավոր և բարդ։ Պարզ ածականներից այդպիսին են՝ ամուրի, ազապ, այրի, աշխետ, արու, որձ, բազում, բուն, զույգ, ոսվասար, ստերջ։

Նույնպես համեմատության աստիճաններ չեն կազմվում մի շարք ածանցավոր ածականներից։ Առաջին հերթին պետք է նշել գոյականներից ան— ժխտական նախածանցով կազմված բազմաթիվ ածականներ, ինչպես՝ անշունչ, անձայն, անամպ, անբիվ, անհատնում, անչուր, անհող, անսաղարթ և այլն։

Սակայն այն դեպքերում, երբ ան— նախածանցով կազմված ձևում ժխտվող հատկանիշը ոչ թե ֆիզիկական, այլ վերացական է, ածականն ունենում է համեմատության աստիճաններ։ Օրինակ՝ անսիրտ— շատ անսիրտ, անխիղճ — ավելի անխիղճ — շատ անխիղճ, անամոթ — շատ անամոթ և այլն։ Օրինակներ՝

«— Վաղո՞ւց է, որ հոգում ես մորս, կնոջս և զավակներիս առողջության համար։

— Այն ժամից, պարոն, երբ իմացա, որ դու նրա հետ վարվում ես ամենաանխիղճ կերպով, ամենավերջին կինտոյի պես» (Նար-Դոս, III, 37)։

«Դուք, իհարկե, չափազանցնում եք, որովհետև, ինչպես տեսնում եմ դեռևս շատ անփորձ եք» (Նար-Դոս, III, 571)։

«Ծայրահեղ հուսահատության մեջ կյանքը նրան ներկայանում էր իբրև բոլորովին անհպատակ մի բան...» (Նար-Դոս, III, 583)։

Հարկ է նշել, որ ան—նախածանցով և ածականով կազմված ածականները նույնպես ունենում են համեմատության աստիճաններ (անզգայուն — շատ անզգայուն, անհաստատ — ավելի անհաստատ—շատ անհաստատ և այլն)։

Համեմատության աստիճան չեն ունենում նաև — վոր, (—ավոր),—ովի վերջածանցներով կազմված բազմաթիվ ածականներ։ Այդպես են՝ ատամնավոր, շնչավոր, հրացանավոր, ձայնավոր, պոչավոր, գրավոր և այլն, որոնք ցույց են տալիս որևէ բան ունենալու հատկանիշ, հավաքովի, ընտրովի, ձեռքբերովի, ջրովի, հնարովի, ծալովի, ցանովի և այլն, որոնք ցույց են տալիս որևէ գործողությամբ ստեղծված հատկանիշ։

Սակայն — վոր ածանցով կազմված շատ ածականներ, որոնք ցույց են տալիս ոչ թե կոնկրետ բան ունենալու, այլ վերացական հատկանիշ, ունենում են համեմատության աստիճան։ Օրինակ՝ արժեքավոր— քիչ արժեքավոր — ավելի արժեքավոր — շատ արժեքավոր — ամենաարժեքավոր, կարևոր—քիչ կարևոր—շատ կարևոր—ամենակարևոր, հարկավոր—շատ հարկավոր, հեռավոր — ավելի հեռավոր — շատ հեռավոր — ամենահեռավոր և այլն։

«Դրանից ավելի զորավոր ապացույց չէիր կարող տալ» (Նար-Դոս, III, 31)։

«Զննալով իր հսկա մարմնին, Վահանն ուտում և խմում էր համեմատարար չափավոր կերպով» (Նար-Դոս, III, 154)։

«Սովորական ներկայացումներին հայոց թատրոնի ամենապատվավոր տեղը առաջին կարգերում բազմած են լինում աստված գիտե ինչ միջոցով ներս խցկված ամեն տեսակ երեխաներ...» (Նար-Դոս, III, 68)։

«Ուրեմն, ես ուզում էի ասել, որ Ազադին շատ վտանգավոր մարդ է և հիմա էլ ազատ մեն է գալիս» (Դ. Սևունց, Թեհրան, I, 152)։

Համեմատության աստիճան կազմելու հատկությունից զուրկ են նաև մի շարք բարդ ածականներ։ Դրանցից աչքի են ընկնում գոյականով, մակբայով և բայարմատով կազմված բազմաթիվ ածականներ, ինչպես՝ արքայաշեն, սյունազարդ, ժայռապատ, պարսպապատ, ոսկեզօծ, ծաղկատար, բեռնատար, մսակեր, երկնահաս, երկնառաք, տնարույս, մշտաժպիտ, հանդիպակաց, կիսաշեն, նորավարտ, եղբայրասպան և այլն, որոնց առաջին բաղադրիչը երկրորդի խնդիրը կամ պարագան է լինում։

Սակայն գոյականով, մակբայով, բայարմատով կազմված բազմաթիվ ածականներ ունեն համեմատության աստիճաններ, ինչպես՝ հայրենասեր — ավելի հայրենասեր — շատ հայրենասեր, ազգատյաց — ավելի ազգատյաց — խիստ ազգատյաց, արագավազ — ավելի արագավազ — շատ արագավազ և այլն։

Համեմատության աստիճան չունեն նաև այնպիսի բարդ ածականները, որոնց առաջին բաղադրիչը (մեծ մասամբ գոյական) երկրորդ՝ ածական բաղադրիչի խնդիրն է։ Այսպես են՝ կարկտախառն, ձյունախառն, անձրևախառն, արյունախառն, ոտարորիկ, գլխարաց, մսազերծ, մսազուրկ և այլն։

Կազմությամբ բարդ այն ածականները, որոնց երկրորդ բաղադրիչն են կերպ, ձև, նման և այս կարգի բառեր, նույնպես չեն ունենա համեմատության աստիճաններ։ Այսպես են՝ մարդանման, հնաձև, սատանայակերպ և այլն։

Այսպես են նաև կես բառով բարդված ածականները՝ կիսախարխուլ, կիսավարտ, կիսավեր, կիսախավար և այլն։

Համեմատության աստիճաններ համարյա չեն ունենում դույն ցույց տվող այն բարդ ածականները, որոնց երկրորդ բաղադրիչն է գույն բառը՝ մոխրագույն, երկնագույն, մանիշակագույն, դարչնագույն, ծիածանագույն, վարդագույն, նահճագույն, ոսկեգույն, արծաթագույն, պողպատագույն և այլն։ Սակայն սրանք ունեն նաև դույնի խտության երանգներն արտահայտող ձևեր, որոնք կազմում են բաց և մուգ ածականների հարադրմամբ։ Օրինակ՝ բաց վարդագույն, մուգ դարչնագույն և այլն։

Համեմատության աստիճան չի ունենում նաև գրաբարյան անցյալ և ապառնի դերբայական ձևերի բարացմամբ առաջացած ածականների զգալի մասը։

Այսպես են՝ հիշյալ, անցյալ, սառուցյալ, կարծեցյալ, բաժանելի, բուժելի և այլն։ Սրանց համեմատության աստիճան չունենալը պայմանավորված է բառային իմաստով։ Սակայն կան նույն ծագումն ունեցող մի շարք ածականներ (ավելի շատ՝ ապառնի դերբայից ստացված), որոնք ունեն համեմատության աստիճաններ։ Այդպես են՝ սիրելի, ատելի, ցանկալի, բաղձալի, մատչելի, վստահելի, հասկանալի, բմբոնելի, կատարյալ և այլն։ Դրանցից կազմված են՝ փիշ սիրելի — ավելի սիրելի — շատ սիրելի — ամենասիրելի, մատչելի — փիշ մատչելի — շատ մատչելի — ամենամատչելի, կատարյալ — ավելի կատարյալ — ամենից կատարյալ, ամենակատարյալ և այլն։ Օրինակ՝

«Համենայն դեպս, թույլ տվեք ձեզ նկատեմ, պարոն Շահյան, դուք շատ զարմանալի երիտասարդ եք երևում» (Նար-Դոս, III, 571)։

«Այդ բանը խիստ հաճելի էր Շահյանի համար...» (Նար-Դոս, III, 571)։

«Վերին աստիճանի խղճալի տպավորություն էր գործում նա իր ցամաքած աչքերով և սառած դեմքով...» (Նար-Դոս, III, 599)։

Դերբայական ծագում ունեցող ածականները հաճախ ունենում են պարագայական լրացում, որն արտահայտվում է մակբայով, ածականով կամ այլ խոսքի մասով։ Օրինակ՝ հնչտ բուժելի, դժվար հասկանալի, սովորական աչքով անտեսանելի, արտաքուստ մատչելի, արտաքուստ գրավիչ և այլն։ Այս լրացումները բխում են համապատասխան ածականների բայական բնույթից։ Սակայն երբեմն այլ ծագում ունեցող ածականներ ևս ունենում են նման լրացումներ։ Օրինակ՝ ֆիզիկապես առողջ, հոգեպես կայտառ, արտաքուստ զվարթ և այլն։

«Իսկ դեմքը նույն ֆիզիկապես առողջ, կլորիկ, լեցուն դեմքն էր, առանց, սակայն, առնական արտահայտության» (Նար-Դոս, II, 416)։

«Առաջին անգամն էր, որ այդ միշտ խանդավառ, միշտ կենսուրախ, միշտ անհոգ երիտասարդին տեսնում էի այնքան դառնորեն լալիս» (Նար-Դոս, II, 498)։

Ածականների այս լրացումները, որոնք սակավ են պատահում, պայմանավորված են այդ ածականների՝ ստորոգելիական վերադիր կիրառությամբ։

Կան նաև ածականներ, որոնք ունենում են խնդիրներ։ Այդպես են՝ ինձ, քեզ ծանոթ, մի բանի արժանի, անարժան, ջրով, հողով լի և այլն։ Օրինակներ՝

«...այդ էր պատճառը, որ այդ պերճահասակ, վեհադեմ, դյուցազնոգի և քաջությամբ ու իմաստությամբ այնքան հառաջադեմ արքայազնի հանդիպումն ինձ չճնշեց» (Մուրացան, III, 61)։

«Իր ֆիզիկական ուժի վրա վստահ մարդու հանգստությամբ նա մոտեցավ, մի ձեռքը գցեց դռան տակը, ուր տախտակներից մեկի ծայրն անձրևներից փտել ընկել էր, մյուսով բռնեց փականքից, բարձրացրեց և մի անգամից դուռը կրնկահան ներս շպրտեց խրճիթը» (Նար-Դոս, I, 22)։

«Անիծելիս շատ անգամ կատարյալ բանաստեղծ էր դառնում. այնպիսի հզոր և ազդու, երբեմն և կնոջ բերանին անսազ անեծքներ ու հայհոյանքներ հորինում, որ ոչ որ ոչ մի տեղ չէր լսել» (Նար-Դոս, I, 65)։

«Նա մի առանձին հպարտություն էր զգում, որ այդքան հաց ու պանիր էր բերել իրենց ծանոթ մի հարուստ ընտանիքից» (Նար-Դոս, I, 91)։

«Հայրը խստաբարո և կրոնասեր մարդ էր, թեև տերտերներին ատելով ատում էր, համարելով նրանց իրենց կոչմանն անարժան մարդիկ» (Նար-Դոս, II, 426)։

«Ջրով լի դդմասրվակը, որ դրած էր սեղանի վրա, լրացնում էր այդ անշուք բնակարանի չքավոր կարասիների թիվը» (Ռաֆֆի, VII, 224)։

«Դասախոսությամբ իսկապես հետաքրքրվողներին խառնվել էին նաև պատահական, աբսուրանների սիրահար մարդիկ» (Գ. Սևունց, *Թեհրան, I, 15*)։

Երբեմն էլ ածականի խնդիրը կարող է բարդվել ածականի հետ՝ իբրև առաջին բաղադրիչ։ Օրինակ՝ ճողփառն, մարդավայել, մտավարժ, տրտուատ, մարդահաճ, կնահաճ *և այլն։*

К ВОПРОСУ ОБ ОБРАЗОВАНИИ ИМЕН ПРИЛАГАТЕЛЬНЫХ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

В. А. КОСЯН

(Резюме)

В современном армянском литературном языке имя прилагательное по своему образованию представляет систему разнообразных лексико-грамматических форм.

Неоднородность морфологической структуры имен прилагательных на современном этапе развития армянского языка обусловлена спецификой грамматического строя современного армянского языка, сочетающего в себе морфологическо-синтаксические формы древнеармянского (грабара) и разговорного языков.

Изучение морфологической структуры имен прилагательных чрезвычайно важно, с одной стороны, для составления академической грамматики современного армянского языка, с другой стороны, для преподавания этой дисциплины в вузах и отчасти в школах.

В этой статье нами изучены различные морфологическо-словообразовательные формы имен прилагательных, их префиксальное, суффиксальное образования, а также формы, образующиеся путем словосложения.

В статье показаны морфологическо-лексические связи имен прилагательных с другими частями речи армянского языка.

Рассматривается также вопрос об образовании форм степеней сравнения качественных прилагательных. Исследованием устанавливаются те семантические группы прилагательных, от которых не образуются формы степеней сравнения, что обусловлено или значением, или же морфологической структурой данной группы прилагательных. Отмечаются также семантические группы относительных прилагательных, образующих формы степеней сравнения и тем самым превратившихся в качественные.